Հավելված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12»* ծածկագրա
Գնանշման հարցման հրավեր

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2021Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ III ԳՈՏԻՈՒ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12-3»

ք. Վանաձոր «30» 12 2020թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյան -ի, որը գործում համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վանաձոր Սանմաքրում»ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Էդմոնդ Էդարյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2021թ. Առաջին եռամսյակի համար Վանաձոր համայնքի III գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

Ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

Բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարող Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքս փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողությա իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումնե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այ սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեո գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատու պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողի է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմ հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշվա ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույ կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսվա միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցվա ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատու էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **14527670 (տասնչորս միլիոն հինգ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր յոթանասուն)** ՀՀ դրամ:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 [19]

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: [20]

---

[17] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջ պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայու մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատե գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատար յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատու ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվու ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպ Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճար ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կա պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագր պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդ պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլն հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնա են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագ ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնությ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրա համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնմ գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկությունն տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստ Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծ է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումն մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չնքե

---

[19] Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճ սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկաց ապա սույն կետը հանվում է նախագծից:

[20] Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատար հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահման ընդհանուր գնի նկատմամբ:

[22] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվ է:

համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համա
առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետությա
օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մաս
պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետությա
դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադար
համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կի
հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոն
հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գն
արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպ
սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 [23]

7.7 [24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը
Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայությա
օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբան
ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որու
սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 3
օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտներ
(խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի
կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են
պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ
գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները
կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար
պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով
կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների
նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ
ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական
հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով
պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն
հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու
մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու
վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող
օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում
հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր
իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի
անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով
ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման
միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով
պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար
հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա
Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և
պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով**

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

կամ կանխիկ փոխով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-
րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իր
տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր
ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ
աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն
լուծվում է:[25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	«Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	Ք. Վանաձոր, Լոռվա խճ. 13
Կենտրոնական գանձապետարան	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900232545021	ՀՀ 16600410625700
ՀՎՀՀ 06901936	ՀՎՀՀ 06917685
----------Մ.Ասլանյան	----------Է. Էդարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

25 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N
« 30 » 12 2020թ. Կնքվ
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/12-3» ծածկագրով պայմանագ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրա

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
3	90511100/534	«2021թ. Առաջին եռամսյակի համար Վանաձոր համայնքի III գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ»	դրամ	**14527670**	1	Տես ներքևում	Կողմերի միջև համաձայնագրի կնքման օրվանից 01.04.2021թ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

III գոտու համար

Անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի III գոտու՝ Կենտրոն, Ցալկուտ, Զուխտ Ախպուր թաղամասերի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 8³⁰-ին: Փողոցների, մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավլելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա համապատասխան մեքենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:
Կենցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Պետք է իրականացվի գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման, փողոցների տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբ բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայր աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից տարածքը: Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենայ դատարկելուց թափված աղբը և հարակից տարածքը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Վանաձոր համայնքի III գոտու տարածքում տեղադրված աղբարկղերից աղբը հեռացնել ամենօրյա հաճախականությամբ, իսկ մասնավոր հատվածում աղբահանությունն իրականացնել շրջիկ երթերի միջոցով, շաբաթը երկու անգամ: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի դեպքում առնվազն երեք օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: Աղբամուղի տարածքն ավլել և մաքրել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Աղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

III գոտու փաստացի մաքրվող մակերեսը մեկ օրվա համար 75880 քմ է: Մաքրվող տարածքից մինչև մոտակա արտոնագրված աղբաթափման վայր և հետադարձի երկարությունը կազմում է 32 կմ: Կենցաղային աղբի կուտակման քանակը 2021 թվականի առաջին եռամսյակի համար III գոտում կանխատեսվում է 1737.650տն:

Վանաձոր համայնքի III գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցելու համար անհրաժեշտ 2 հատ ինքնաթափ-բեռնատարողությունը՝ առնվազն 5տն և 2 հատ հատուկ կահավորված բարձող մեքենա ԿՕ-բեռնատարողությունը՝ 8մ³ կամ ավելի, 4 հոգի վարորդ/ վարորդական իրավունքի վկայական B,C կարգ, առնվազն 3 տարվա աշխ.ստաժ/, 4 հոգի բարձող բանվոր և 4 հոգի մաքրող բանվոր-առկա է:

Կից ներկայացվում է Վանաձոր քաղաքի III գոտու սանիտարական մաքրման փողոցների ցանկը, ինչպես նաև կենցաղային աղբահանության իրականացման ցանկն ըստ փողոցների, աղբարկղերի տեղերի և աղբամուղերի:

Վանաձոր քաղաքի III գոտու փողոցների սանիտարական մաքրում

N	Փողոցների անվանումը	Փողոցի երկարությունը	Փողոցի լայնությունը	Փողոցի մաքրվող երկարությունը	Փողոցի մաքրվող լայնությունը	Մաքրվող մակերեսը ք/մ օր
1.	Գրիգոր Լուսավորիչ	900	14	900	8	7200
2.	Կ. Դեմիրճյան	4000	12	180	8	1440
3.	Մյասնիկյան	1380	14	700	8	5600
4.	Հայքի հրապարակ			-	-	3510
5.	Տ. Մեծի պողոտա	2100	17	1100	10	11000
6.	Մ. Խորենացի	400	24	400	17	6800
7.	Թումանյան հրապարակ			-	-	1030
8.	Վ. Սարգսյանի անվան հրապարակ			-	-	1060
9.	Գ. Նժդեհ	1250	10	700	8	5600
10.	Վարդավառի հրապարակ					1200
11.	Մ. Գոշի	250	8	250	6	1500
12.	Թումանյան	900	14	900	8	7200
13.	Մոսկովյան	1300	14.5	950	6	5700

14.	Մ. Մկրտչյան	150	8	150	6	900
15.	Վարդանանց	2900	10.5	1300	8	10400
16.	Թատերական	450	6.6	250	4	1000
17.	Թումանյան էստակադա	170	19	170	7	1190
18.	Լոռվա հրապարակ			-	-	1150
19.	Լազյան	1200	11	400	6	2400
	Ընդամենը՝					75880

Վանաձոր քաղաքի III գոտու թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց

/h	Փողոցի անվանումը	Աղբարկղերի քանակ /հատ/	Մաքրման հաճախա կանությունը	Բազմաբնակարան շենքերի հասցեներ	Աղբամուղների քանակ	Մաքրման հաճախա կանությունը
1.	***Գր. Լուսավորիչ փողոց***					
	▪ <<Նարինե>> կաթնամթերքի գործարան	4	ամենօրյա	Գր. Լուսավորիչ 14	2	շաբաթական 2 անգամ
	▪ Գրին պլազա խանութի մոտ	6	ամենօրյա/3 անգամ/	Գր. Լուսավորիչ 39/1	1	շաբաթական 2 անգամ
2	▪ Հագուստի շուկայի տարածք	4				
	▪ Շուկա	5	ամենօրյա			
	Մյասնիկյան փողոց					
	▪ Թիվ 7 շենքի մոտ	9	ամենօրյա /2 անգամ/	Մյասնիկյան 3	2	շաբաթական 2 անգամ
	▪ Թիվ 1 պոլիկլինիկայի մոտ	1	ամենօրյա			
	▪ Մյասնիկյան 2ա	2	ամենօրյա			
	Տ. Մեծի պողոտա		ամենօրյա			
3	▪ Թիվ 46,79,44,41,41ա շենքերի բակ	10		Տ. Մեծի 59	4	շաբաթական 2 անգամ
	▪ Քաղաքապետարանի արևելյան հատված	2	ամենօրյա			
	▪ Վանատուրի հետևի մաս	2	ամենօրյա	Տ. Մեծի 34/2	1	շաբաթական 2 անգամ
	▪ Մանկավարժական համալսարան	4	ամենօրյա	Տ. Մեծի 34/3	1	շաբաթական 2 անգամ
	Լազյան փողոց		ամենօրյա	Տ. Մեծի 34/4	1	շաբաթական 2 անգամ
4	▪ Կոշիկի ֆաբրիկայի մոտ	6	ամենօրյա	Տ. Մեծի 34/5	1	շաբաթական 2 անգամ
	▪ «Տակառ»սրճարանի մոտ	3	ամենօրյա	Տ. Մեծի 77	2	շաբաթական 2 անգամ
	▪ Նիավտոմատիկա	1	ամենօրյա			
	Մ. Գոշի փողոց		ամենօրյա			
	▪ Արցախ պուրակ	4	ամենօրյա	Մ. Գոշի 7	4	շաբաթական 2 անգամ
	▪ Դատարան	2	ամենօրյա			
	▪ ԱԱԾ	1	ամենօրյա			
	Թումանյան փողոց		ամենօրյա	Թումանյան 9բ/1		շաբաթական 2 անգամ
5	▪ Ավտոգենմաշի դիմաց	3	ամենօրյա			
	▪ Քրեակատարողական հիմնարկ	3	ամենօրյա			
	▪ Թիվ 5 շենքի մոտ		ամենօրյա			

	▪ Թիվ 14	3	ամենօրյա			
	▪ Նախկին մանկական աշխարհ (Տիգրան Մ. փողոց)	2	ամենօրյա			
	▪ Արևիկ խանութի հետնամաս (Տիգրան Մ.փողոց	4	ամենօրյա			
	▪ Մսի կոմբինատ	2	ամենօրյա			
	▪ Դիետ ՍՊԸ	2	ամենօրյա	Մոսկովյան 10	2	երեք օրը մեկ
	▪ Թումանյան 9ա /ներսից/	2	ամենօրյա			
	▪ Թիվ 9բ / ներսից/		ամենօրյա			
6	***Մոսկովյան փողոց***		ամենօրյա	Մոսկովյան 54/1	1	երեք օրը մեկ
	▪ Թիվ 60,54,50,56,27,25, շենքեր	10	ամենօրյա	Մոսկովյան 56/1	1	երեք օրը մեկ
	▪ Թիվ 23ա	2	ամենօրյա	Մոսկովյան 62-70	5	երեք օրը մեկ
	▪ Զինվորական հոսպիտալ	4	ամենօրյա			
	▪ Մաքսատան հարևանությամբ	1	ամենօրյա			
7	***Վարդանանց փողոց***			Վարդանանց 23	2	երկու օրը մեկ
	▪ Էրեբունի ռեստորանի մոտ	6	ամենօրյա	Մ. Խորենացի 2/1	1	երեք օրը մեկ
	▪ Էրեբունու հետևի մասում	3	ամենօրյա			
	▪ Հին փոստի մոտ	3	ամենօրյա			
8	***Ազատամարտիկների 1***		ամենօրյա			
9	***Նժդեհի փողոց***					
	▪ Նժդեհի 6	6	ամենօրյա			
	▪ Նժդեհի 9/2	4	ամենօրյա			
10	***Բաթումի***					
	▪ էլ . ցանց(Դեբեդ մասնաճյուղ)	2	ամենօրյա			
11	***Տերյան***		ամենօրյա			
	▪ Տերյան 3 (ավտոտնակներ)	1	երեք օրը մեկ			
12	***Կ. Դեմիրճյան 23***		ամենօրյա			
	▪ Թիվ 1 արհեստ .ուսումնարան	3	ամենօրյա			
13	***Մ. Խորենացի 1գ***		երեք օրը մեկ	Մ. Խորենացու 1գ	1	երկու օրը մեկ
14	***Հանքային ջրի մոտ (Թթու Ջուր)***	2	երեք օրը մեկ	1գ 21/36	1	երկու օրը մեկ
15	***Թագավորանիստ***	1	երեք օրը մեկ	1գ-58/89	1	երկու օրը մեկ
		132			34	

Վանաձոր քաղաքի III գոտու թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց/շրջիկ/

h/h	Փողոցի անվանումը	Մաքրման հաճախականությունը
	Մասնավոր սեկտոր /շրջիկ/	
	▪ Մոսկովյան	շաբաթական երկու անգամ
	▪ Ֆրիկի	շաբաթական երկու անգամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ
Ք. Վանաձոր, Լոռվա խճ. 13
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 16600410625700
ՀՎՀՀ 06917685

----------Է. Էդարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.
« 30 » 12 20[illegible]թ. Կնքվա
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ-21/12-3» ծածկագրով պայմանագր

Վանաձոր համայնքի առաջին եռամսյակի համար III գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցում

կենցաղային աղբահանություն						
Հ/հ	գոտին	1 երթի երկ. և տեղափ. գոտու ներսում	չափման միավորը	ծավալը	միավորի գինը/ դրամ/ առանց շահույթի և ԱԱՀ	արժեքը / դրամ/
1	2	3	4	5	6	7
	III գոտի Կենտրոն Ցալկուտ, Ջուխտ Ախպուր թաղամասեր	32	տն	1737,650	5901	10253872,6
	Ընդամենը					**10253872,6**
	Շահույթ 11%					1127926,0
	Ընդամենը					**11381798,6**

Սանիտարական մաքրում				
	չափման միավորը	մաքրվող մակերես թ.մ. /օր	միավորի արժեքը 1 թ.մ. -ի համար /առանց շահույթի և ԱԱՀ-ի/	արժեքը 90 օրվա համար / դրամ/
1	2	3	4	5
III գոտի Կենտրոն, Ցալկուտ, Ջուխտ Ախպուր թաղամասեր	մ^2	75880	0,415	2834118
Ընդամենը				**2834118**
Շահույթ 11%				311753
Ընդամենը				**3145871**
կենցաղային աղբ+սանիտարական մաքրում ընդհանուր				**14527670**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ
Ք. Վանաձոր, Լոռվա խճ. 13
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 16600410625700
ՀՎՀՀ 06917685

----------Է. Էդարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 30 » 12 2021թ. Կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ-21/12-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	90511100/534	«2021թ. Առաջին եռամսյակի համար Վանաձոր համայնքի III գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ»	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
««Վանաձորի Սանմաքրում» ԲԲԸ
Ք. Վանաձոր, Լոռվա խճ. 13
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 16600410625700
ՀՎՀՀ 06917685

----------Է. Էդարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 30 » 12 2020թ. Կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ-21/12-3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«30» 12 2020թ. Կնքված
«ՀՀ ԼՄԿՔ ԳՀԾՁԲ-21/12-3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն